

թեան իւրեանց, սալիւք եւ ուռամբք, կռանաւք եւ խարտոցովք, խարտել եւ կտրել եւ ի բաց հանել զերկաթսն ի ձեռաց եւ յոտից եւ ի պարանոցէ սրբոցն. եւ զոր ոչն կարասցեն կտրել խարտոցաւքն՝ ուռամբք շարդեալ զբեւեռս¹ երկաթոյն, դնելով ի վերայ սալիցն, բեկեալ հանցեն ի բաց: 2 Բանզի ստուարք էին եւ ծանունք քան զբնութիւն ամենայն երկաթոյ, որովք զայլ մահապարտսն կապէին, զոր ի նոցա իսկ անուն տուեալ էր առնել մոգուցն, որպէս յանուն արանց վատախրատից եւ աշխարհակորուսաց եւ աստուածասպանաց, եւ մանաւանդ զշրթայս² սրբոյ կաթողիկոսին Յովսէփայ. զոր եւս առաւել քան զսաստկութիւն այլոց շրթայիցն ստուարագոյնս ասէին զնորայն եւ անհեղեղս:

3 Եւ տեսեալ սուրբ քահանայիցն Աստուծոյ զեկեալս ի դահճացն ընդ Վեհդէնշապիոյ³, եւ զբազմութիւն դարբնացն գիտացեալ՝ տրտմեալք խռովէին առ հասարակ. վասն զի ցանկանային երկնահրաւիրակ կոչմանն նոյն զարդու, զոր յաղագս անուանն Աստուծոյ արժանի եղեն կրելոյ զայնչափ ժամանակս կամաւ եւ ցնծութեամբ ի մարմնի իւրեանց, թէ եւ հասեալք նովիմք ի տեղի նահատակութեանն, ուր եղեալք արժանիք յաւիտենից փառացն, անդ ապա դնելով յետս միանգամայն զշրթայսն եւ զկապանս երկրային ծանրութեանց այսր աշխարհիս կամէին ախորժելով: 4 Բանզի զոր աւրինակ մոլեկան⁴ փառացն ցանկացողք, արք եւ կանայք, որք անյագութեամբն համակեալք ոսկովք եւ պատուական ակամբք եւ մարգարտովք, կապեն ախորժելով զիւրոյին անձանց զձեռս եւ զոտս եւ զպարանոց. զորս թէ ոք ի թշնամեաց եւ կամ ի բռնաւոր իշխանաց կապեր առ վտանգի եւ նովիմք տայր կալ եւ չհանել ի բաց՝ առատանային փղծկալով, եւ չունէին ժոյժ եւ առ վայր մի. եւ արդ ինքեանք զինքեանս կապեն, եւ չհամարին ծանր եւ ոչ զգան, այլ եւ զոր յայլսն տեսանեն յայնպիսի նիւթոյ՝ նախանձին⁵, թէ ընդէ՞ր ոչ եւ այն⁶ եւս ի մերում զարդուս չէ. բայց իբրեւ այլոց կայ⁷, ես ի՞նչ երեւիմ քան զոք⁸ աւելի. եւ թէ կուտեր ոք զամենայն նիւթս աշխարհիս պատուակաւութեան ի վերայ այնպիսւոյն, մինչեւ հեղձամղձուկ եղեալ խեղդէր՝ շատս չասեր: 5 Բայց եւ ոչ այնպիսիքն երեւէին պաճուճեալք անցաւոր զարդուքն, այնպէս գեղեցիկք եւ շքեղք եւ ամենայն տեսողաց պատուականք, որպէս երեւէին հայրանման որդիք նահատակին Գրիգորի ցանկալի շրթայիւքն՝ եր-

1 ՏՏ. զբեւեռ

2 Ատ. շրթայս. ԲԳտ. շրթայք. այսպէս ըստ 2.

3 Ատ. վեհդէնշապիոյ

4 ՏՏ. չիք մոլեկան

5 2. նախանձին-ը նախ գրուած՝ տխատին, յետոյ ուղղած այսպէս

6 ՏՏ. ընդէ՞ր ոչ այն

7 Թերեւս ուղղելի՝ բայց իբր եւ այլոց կայ, կամ բայց իբրեւ եւ այլոց կայ

8 2Ատ. քան զոքն. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.